ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4417-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՔԱՆԱՔԵՌԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.35 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԼՄԻՐԱ ՆԻԿՈՂՈՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ԲԱԳՐԱՏ ԷՄԻՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էլմիրա Նիկողոսի Մուրադյանի (ծնված 06.01.1947թ.), Բագրատ Էմինի Մուրադյանի (ծնված 08.04.1958թ.) դիմումը: Երևանի Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռի 10-րդ փողոց հ.35 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 742.52քմ, որից 558.6քմ մակերեսով հողամասը Էլմիրա Նիկողոսի Մուրադյանին, Բագրատ Էմինի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (գույքային թերթ 23.02.1971թ. հ.48, 15.05.1991թ. ժառանգության վկայագիր):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 20.02.2024թ. հ.ԱՏ-20022024-01-0845 և 2302.2024թ. հ.ԱՏ-23022024-01-1232, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 30.05.2024թ. հ.Հ-5916 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.10.2025թ. հ.20-Ել-47823 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռ 10-րդ փողոց հ.35 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Քանաքռ-Զեյթուն, Քանաքեռ 10-րդ փողոց հ.35 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Էլմիրա Նիկողոսի Մուրադյանի, Բագրատ Էմինի Մուրադյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 558.6քմ մակերեսով հողամասին կից 183.92քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 183.92քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռ 10-րդ փողոց հ.35 հասցեում գտնվող 742.52քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ